# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր   N 1

## N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-45
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** «07» «11» **2025թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հատուկ կապ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Ղասաբօղլյանի, հիմք ընդունելով 13.02.2025 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-45** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-45** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **21 000 000** (քսանմեկ միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել **9 000 000** (ինը միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **30 000 000** (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011049187**
**ՀՎՀՀ 02882913**
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն gnumner@mia.gov.am**

**______________ Ա. Ֆիդանյան**
**/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Հատուկ կապ» ՓԲԸ
**Հասցե ք.Երևան Հ.Հակոբյան 3**
**Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 2052822133751001**
**ՀՎՀՀ 02509254**
**Հեռ: 010 57 02 08**
**Էլ. Փոստ: hatukkap@hti.am**

**______________ Մ.Ղասաբօղլյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ)**

*Հավելված N 1*
*<<07>> 11 2025թ.*
***ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-45 ծածկագրով գնման պայմանագրի***

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64121200/1 | Փոստի առաքման ծառայություններ | | | | | | | | | | | 9 000 000 | 9 000 000 | **9 000 000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
***Հ/Հ 900011049187***
***ՀՎՀՀ 02882913***
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն gnumner@mia.gov.am**

**Ա. Ֆիդանյան**
**/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
Հատուկ կապ» ՓԲԸ
**Հացե ք.Երևան Հ.Հակոբյան 3**
**Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 2052822133751001**
**ՀՎՀՀ 02509254**
**Հեռ. 010 57 02 08**
**Էլ. Փոստ: hatukkap@hti.am**

**Մ. Ղազարօղլյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ)**